բնորոշ փայտե կժերը՝ զանազան ձևի և մեծության։ Չի պատահում նաև ամանեղեն շարելու համար պատրաստված դարակը, որով աշխատում է հյուրի առանձին ուշադրությունը գրավել լոռեցին և մանավանդ Ախալքալակի և Ախալցխայի նախկին կարնեցի հայը։ Լոռում դարակակալի վրա տանտիկինը ճաշակով դասավորում է իր գեղեցիկ սրբված և կլեկած պղնձեղենը, իսկ Կարնո գավառից գաղթած լենինականցի, ախալցխացի և ախալքալակցի հայը մի քանի հարկ շարում է իր կավեղենի ժողովածուն, աշխատելով տպավորություն գործել նրա և՛ գեղեցկությամբ, և՛ բազմաձևությամբ, և՛ տարբեր մեծությամբ։

Տան մեջ քմահաճ կարգավորությամբ դարսված են խնոցիները, մեծ ու փոքր տաշտերը, կաթնատնտեսական դատարկ և զբաղեցրած պարագաները, պանրի և յուղի տիկերը։ Սյուներից կախված են զանազան կաշվե պարկեր, փոկեր, զենքեր՝ հրացան, երկփող և միափող վառոդաման, դաշույն, կեռ սուր, որոնք կախված են պատերին ցցած փայտե կամ երկաթե խոշոր ու մանր գամերից։ Աջակողմյան կամ ձախակողմյան զույգ սյուների միջև մարդու հասակի բարձրության վրա սյունից սյուն հաստատված է ամուր ձող, սալը կամ սրլբաղան, որը մի դեպքում փոխարինում է ձգված պարանին, վրան փալաս, գորգ, փոկեր, սանձ և նման իրեր փռելու, մյուս դեպքում՝ մրգի կախաններ և կանաչեղեն կախելու և չորացնելու համար։

Պատերի տակ կանգնեցրած են ջվալները, խարարները։ Զանգեզուրի ադրբեջանական գյուղերում ղարադամի ներսը նույն պատկերն է ներկայացնում։ Միայն այստեղ ավելի շատ են յուղի, պանրի, մածնի տիկերը, գրեթե միշտ պատրաստ մաֆրաշը՝ մեջը սեղմ ճխտած անկողիններով և շորերով, ձիերի թամքերն ու փալանները։ Ամենն ասում է, որ տանտերը դեռ շատ ուժեղ կապված է անասնապահության հետ և ամեն ինչ պատրաստ է պահում ըստ առաջին պահանջի իր ընտանիքի մի նշանավոր մասը սարն ուղարկելու համար։

Հացատոնը–ղարադամը, որն առանձնապես հաճախակի է պատահում և՛ Սիսիանում, և՛ հարևան Բուն Զանգեզուրի գյուղերում, ձգվում է և հարավ մինչև Արծվանիկ և ավելի հեռու, որտեղ նրա կողքին արդեն նրա հետ մրցում է և հետզհետե վերջնականապես նրան դուրս մղում երկար պատշգամբավոր, անյէրթիկ, լույսը կողքի պատուհաններով ստացող ձևը։ Այժմ հին ձևի շենքերը կամ քանդվել են և փայտեղենը գործ է դրված նոր կառուցումների վրա կամ վեր են ածվել խոհանոցի, պահեստի, սոսկ թոնրատոնի, իսկ հարսանիքի կամ թաղման ժամանակ ծառայում են որպես հարկավոր լրացուցիչ զետեղարան, հարսնքավորների կամ հուղարկավորների համար։ Նոր տները հրաժարվել են վերևի լույսից և լուսամուտներ են թողնում պատերի մեջ գրեթե միշտ դեպի պատշգամբ, բայց երբեք ետևի պատի մեջ, անշուշտ հակառակ քամուց խույս տալու համար։ Բնակարանը բաղկացած է լինում մեկ կամ երկու, նույնիսկ երեք սենյակներից՝ մի շարքով ձգված, առջևից ընդհանուր երկար և լայն պատշգամբ, որը շենքի անհրաժեշտ մասն է և փոխարինում է հացատոնի սրնարին։ Եթե տունը երկուհարկանի է, որ ավելի և ավելի հաճախ է պատահում, վերին հարկը տանող փայտե կամ քարե սանդուխքը միշտ բակիցն է, ոչ թե պատշգամբի տակից։ Վերին հարկը ծառայում է որպես բնակարան, ստորինը՝ որպես խոհանոց, մառան, պահեստ, նույնիսկ որպես ախոռ։ Ձմեռը, սակայն, գերադասում են այստեղ, ինչպես և Լեռնային Ղա-